

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



ԽՈՐԱՄԱԿ-ԱՊՎԵՍ


ՎԵՐԱԽԱԾ ԳԵՐՍԱՆԵՐԵՆԻՑ

ԽՈՐՉՈԴԱՅԻՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՊԵՏՀՐԱՏ
1931

- 6 NOV 2011

83 Ա

Խ-81
Մ



ԻՈՐԱՄԱՆԿ-ԱՂՎԵՍ

ԿԵՐԱԾԱԾ ԳԵՐԱՆԵՐԵՆԻՑ

ԽՈՇՀՐԴԱՅԻՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՊԵՏՉՐԱՍ
1931



17 APR 2014

1341



Մարտ ամիսն եր:

— Փամանակ և ինձ համար տուն շինեմ, ծրագրում
եր աղվեսը:

Մութ անտառի չորս կողմն ընկած իր համար վարչ
շինելու հարմար անկյուն եր վորոնում նա:

Ուզիդ ե, անցյալ տարի յել իր սեփական վորչն ու-
ներ նա, բայց վախենում և վերադառնալ այնտեղ: Դեռ
նա չի մոռացել ինչպես անգութ վորսորդներից մեկը
հափշտակեց նրա վորքիկ ձագուկներին:

Սա յե պատճուռը, վոր նա աշխատում և հեռու հաղ
այնտեղից:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
7998-53



Վերջապես նա կանգ առավ բլրտիկ լանջերից մեկի վրա: Այստեղ թե հողն և փխրուն և թե ծածկված իշտ սոճիներով:

Սկսեց փորեկ:

Փորում եր գիշեր-ցերեկ. ուտելու ժամանակ անզամ չեր գտնում: Տասն որ շարունակ այսպես յեռանդով աշխատեց: Յերկու կողմից յերկար անցք անցկացրեց և բերեց միացըրեց իր ապրելու սենյակի հետ:

Փափուկ մամուռ ու տերեներ բերեց, փռեց սենյակում, վորպեսդի ձաքերը շմբուն:



Ապրիլի կեսն եր: Աղվեան ընտանիքի տեր յեղավ. Նա յերեք փափուկ, աղվամազ ձագուկ ունեցավ: Աւղիդ ե, դեռ ձագերը չեյին կարողանում աշքերը բաց անել, բայց մայր աղվեսը շատ եր սիրում նրանց:

Յերջանիկ եր զգում իրան, մայր աղվեար, յերբ ձագերը քաղցր-քաղցր գրկախառնվում եյին, կամ խաղում նրա հետ:

Բայց արս բոլորի հետ նրա հոգսն ել մենացավ:

Նա շարունակ հիշում եր անցյալ տարիւա դժբախառը յունը և ամեն մի ձայնից ու տերեկի շարժումից սարսափում:


Յերկար ժամանակով յերբեք իր գործից շաբ հեռանում նա:



Յերկու շաբաթ ել անցավ։ Զագերի աչքերը բացվեցին և նույնիսկ սկսեցին սենյակում որորվելով մանգալ։

Յերբ յերեք շաբաթվա յեղան, իրենց զբոսավայրը վորչի անցքերը տեղափոխեցին ու նույնիսկ ցերեկվա լույսին վարժեցրին իրենց աչքերը։ Իսկ վերջը, մայր աղվեսի թույլովով թյամբ նույնիսկ վորչի անցքերից դուրս տաղցին։ Ինչքան ուրախ եյին ձագերը։

Վորքան քազզը և յեղել արեի լույսը, տաք ողը, ինչպան լավ բան և յեղել ավագի վրա վազվզել, առօս հնաերի հետ խաղալ։



Մի անգամ, յերբ խաղից հոգնած ձագերը քնած եյին, մայրը նըանց համար կենդանի մուկ քերեց։

Սա ինչ բան է. ձեր հոգուն մեռնեմ, ինչ զարմանալի բան է, յերգեք այսպիսի բան չենք տեսնել մենք, յեթե ամոթ չլիներ, կփախչեյինք, ասում եյին ձագերը։

Բայց մոր խրատի համաձայն դեռ մեկը նրանցից ատամների մեջ առավ մկանը ու կծեց, հետո յերկորդը ապա և յերրորդը։ Սկսեցին կռվել, աղմկել. ամեն մեկն տպում եր անծանոթ կննդանու համը տեսնել։




Այսոր յերեկոյան, յերբ լուսինը դուրս կղա, յես փորսի կերթամ, ասաց մայր աղվեսը, ձեզ ել հետոս կտանեմ. շատ բան կտեսնեք, շատ բան կտովարեցնեմ ձեզ. Միայն պետք ե խելոք լինեք, ինձ լսեք, շարունակ ինձ հետեւեք. Հիշում եք, թե ինչպես անհծած շունը մեր հարևան աղվեսի չորս ձագուկներին պատառ-պատառ արեց են ձորում. Շատ զգույշ պետք ե լինեք, վոր դուք ել նման կտանգի չենթարկվեք.



— Սուս, ծառի տակ ինչ վոր բան ե շարժվում. Անպատճառ մուկ պետք ե լինի, մտածեց ձագերից մեկը ու ցատկեց, հարձակվեց, բայց շուտուվ զգաց, վոր սուր-սուր փշերը ծակուտում են իրան:

— Վայ, ոգնեցեք, ոգնեցեք, աղաղակում եր փոքրիկ փորսորդը. Թաթիկներից արյուն եր հոսում. Մայր աղվեսն ոգնության հասավ իր զավակին.

— Մայմուն, հանդիմանեց մայրը, ով ասաց քեզ վոզնու. Վրա վորս անես: Հալալ ե, վոր քիթդ ու թաթերդ ծակոտեցիր... Ել ժամանակ չկորցնենք, տղաներս, շարունակենք մեր ճանապարհը, ես մոտիկ տեղերում համեղ կերակուր ճարելու հույս ունեմ:



— Անտառի ծայրին մի գյուղացի յե ապրում: Բակում շատ-շատ ու չաղ-չաղ հավեր ունի նա: Գնանք, յեթե կարողացանք մի չաղ հավ փախցնել, մեր քեփին քեփ չի հասնելու: Այ, են ծայրի ցանկապատից մոտենանք: Զգույշ յեղեք և լով հետեցեք, վոր գյուղացին կամ նրա շունը մեզ չնկատեն: Չեներդ կտրեցեք, նստեցեք ետ խոտերում և նայեցեք, թե ինչ եմ անելու:



Մայր աղվեսն այնպես կպավ գետնին և այնքան փոքրացավ, վոր գժվար եր նկատել, թե ինչպես փորսող և տափս խոտերի միջով: Գյուղացու բակում հավերը կը կռոց ու աղմուկ բարձրացրին: Բայց արդեն ուշ եր: Մայր աղվեսն արդեն իր ձագերի մոտ եր, բերանում մի չաղ աքաղաղ ուներ բռնած:

— Դեհ, տղաներս, շուտ արեք, շտապենք զեսի անտառ: Զագերն ուզեցին թեթևացնել իրենց մոք ըեռը. նըրանք մի-մի թև պոկեցին աքաղաղից և բերաններն տռած վագում եցին մոք հետեւց:

Վորջի մոտ մի լով քեֆ սարքեցին: Հափում եցին աքաղաղը, հետոն ել կռվում ու աղմուկ բարձրացնում:



Մի անգամ աղվեսի ձագերը լճի մոտով եյին անցնում։ Լճի ափին նրանք մի չաղ բար նկատեցին։

— Տեսեք, վոնց եմ բռնում, հպարտ-հպարտ ասաց ձագերից մեկը, ցատկեց և ուղղակի ջուրին ընկավ։ Եսա վախեցավ մեր հպարտ վորսորդը, յերք իր վոտների տակ մամոստ, փափուկ հող չզգաց։ Սրա ենու միաւին նազաց ինչ վոր ուառը բան բավական արագությամբ կուկորդն ե լցվում ու խեղդում նրան։

Մնացած աղվեսները լճի ափին կանգնած հսկում, ծիծաղում եյին ու ասում։

— Մենք խելացի յենք, մեզ այդպիսի բան չի պատահելու։



— Մայրիկ, մի անգամ եւ մի չաղ աքաղաղ ուտեցը մեզ, ասացին ձագերն իրենց մորը. յերեկ ենքան բար կերանք, այսոր միս ենք ուզում ուտեր

— Հայ, պատասխաննց մայրը. գնանք, զույե ձեր ցանկությունը կատարիմ. բայց սուս, են ով ե... Նա մեր ծանոթ գյուղացին ե. հրացանը ձեռքին պահապան ե կանգնել, վոր մենք աքաղաղ չգողանանք... Տեսեք-տեսեք, ինչպիս ել խռմիում ե... Եհ, բարեկամ, զու ինձ բակդ մտնել չես խանգարելու, բայց են անտեր շնիցւ շատ եմ վախենում։ Անօլատառ արսեղից ենու չի լինելու են անիծածը և յեթե նկատեց, վայն յեկել, մեզ տարել ե...»



— Զըփ-չըփ, չըփ-չըփ... Սա ինչ ձայն ե ես մուլք գիշերին... Են չար վորսորդն ե, վորի մասին շատ եմ խոսել մեզ հետ... Նայեցեք, ինչպես որորվելով ե քայլում, անպաճառ դիմի յե կոնծել: Հարբած ե, ուրեմն մեզ համար վտանգավոր չե: Բայց տեսեք, նրան յերկարական կենդանի յե հետեւում. Նա շատ վտանգավոր ե մեզ համար: Դրանից շատ զգույշ պետք ե լինեք, զավակներս: Յեթե նա իմացավ, վորտեղ ենք ապրում մենք — ստիպված պետք ե փոխենք մեր բնակարանը:




Աշնան սկիզբն եր: Ցըտերն արդեն սկսվում ելին: Աղվեսն իր լնտանիքով վորսի յեր դուրս յեկել: Թփերի մեջ բուն դրած կաքավ վորպալու մտաղրություն ունելին: Աղվեսի ձագերն արդեն մոր չափ ելին դարձել ու մարմինը ծածկվել գեղեցիկ վայլուն մազով: Ձագերն արդեն մեծի տեղ ելին դնում: Հանկարծ շան հաջոց լավեց:

— Այս կողմ, այս կողմ շտապեցեք, Ձբաղացի կողմ վագեցեք, աղաղակում եր սրտաճաք մայրը:

Բայց ձագերից մեկը չուղեց լսել մոր խորհուրդը:

— Շատ ել չեմ վախենում շան հաջոցից, ինչքան ուզում ե հաշի, միևնույն ե ինձ չի հասնելու, կվազեմ աշ ու ձափ, նույնիսկ հաճելի յե վագել, մտածում եր նա:



Բայց յերբ ձագն անտառի միջով պետք է վազեք,
անցներ, հանկարծ հրացանի ձայնը լսվեց...

—Բում, բում... Անհնաղանդ աղվեսը սաստիկ ցավ
զգաց.

—Ինչո՞ւ մորս չլսեցի... Բայց արդեն ուշ եր... նա
ել վաղելու ույժ չուներ ու ուշաթափ ընկավ փափռուկ
խռուերում.

Քիչ հետո, յերբ ուշքի յեկավ և աչքերը բացեց, տե-
սավ, վոր իր գլխին սև շունն և կանգնել... Սարսափից նա
նորից ուշաթափվեց և ընդմիշտ փակեց իր փոքրիկ աչքերը:

Սարսափած մայր աղվեսը դեպի տուն եր շտապում...

—Զեր փոքրիկ յեղբայրն ել չի վերադառնալու, ա-
ռում եր իր ձագերին ու ավելացնում... մի գիտե մեզ
ինչ սև որեր են սպասում... Զար մարդիկ մեզ հանգիստ
չեն թողնում... Յերանի մեր մորթին այսքան դեղեցիկ
չլիներ—մենք ավելի յերշանիկ կինեցնք...



ՀՀ Ազգային գրադարան



NL0389739

ԳԻՆՆ Ե 35 ԿՈՊ.
ԿԱԶՄԸ 15 ԿՈՊ.

1391
1309



83
Խ-81

Ե. Բ. Հ. Ե. Յ/Ծ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ. ԹԱՎԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Ն 247 ԸՆԴԱՑՅՈ 1000